

Ճան : Ի՞ն կրակէն ետե շինուած է հի մակուան քաղաքը , անոր համար առջինէն ալ աւելի փառաւոր է : Հոս դրուած պատկերը՝ Վրեմիէն տեսնուած կտորին տեսարանն է :

ՅԱՄԱՉԱԴԱՐԱՄՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՑԻՆ

ՀԱՐԴ յոլով խնդիրք յուզեցան 'ի ժողովս ազգասիրաց , թէ որպէս մարթ իցէ կրթել զազգ մի ողջոյն գյետնեան 'ի քաղաքականութեան և յիմաստասիրութեան վարժից , զի մը տաւորականաւն ձոխացեալ գիտութեամբ՝ և ըստ մարմնոյ ևս վարեսցէ կեանս բարօրութեան :

Ը ատք հարեանցի իմն տեսութք համարեցան թէ ազգ մեր և այսօր իսկ կարող է թօթափել զսկիտութիւնն յանձնէ , և 'ի նշոյլ գեղեցիկ բաղդին իւրոյ երևելի լինել աշխարհի : Ի՞ս առաւել տենչ է մտաց քան ուղիղ տեսութի . քանզի իբրև 'ի վեր առնում զայս մտաց իմոց և անցանեմ ընդ վեցդարեան ժամանակս , տեսանեմ զազգ մեր արգոյ յար 'ի տառապանս տգիտութեան և յաղքատութեան տուայտեալ , նմանեալ ամենեին արքայիկ վարդենւոյ տնկելս 'ի հովասուն բուրաստանի՝ յանցս բարեհամ վտակաց : Ի՞ն են նորա շառաւիղք , բազուկք , ոստք , թիլք , ծունկք և բողբոջք , և ամենայնիւ անթերի . այլ աւաղ , զի յընձիւղելն կանաչագեղ և 'ի տերեւ արձակելն՝ անդէն և անդ ճարակի . յումմէ . 'ի գազանացեալ և 'ի մոլեգին որդանց տգիտութե . և պէսպէս թերութեց : Ի՞սպէս է ահա այժմու հանգամանք ազգիս : Ի՞րդ տեսանես զի առ 'ի կարող լինելոյ դարմանել զտունկմիզայս օրինակ քչքշեալ , շուրջ զարմատովն բաժակել և արբուցանել , զվասարեր բազեղունս որք կոռին ընդ նա՝ քան .

ցել զորդունսն կոտորել և զանպիտան ոստս հատանել սրբել զի տունկն այն վատթարեալ զօրասցի և ծաղկեսցէ , և ծանիցէ աշխարհ ամենայն զի այս տունկ տնկեալ յլուսուծոյ յեղեմատիպ դրախտս հայաստան աշխարհի քաջաբեր է և բարետեսիլ , այս ամենայն ասացի՝ ոչ թեթե ինչ են 'ի գործել , այլ պարտ է զոգի 'ի բուխն եղեալ գուն գործել , մշակել , ձգնիլ և վատակել . պարտ է յընդհանուրս ծաւալել զաշխատանս , զի ողջոյն ազգն միանգամայն ծաղկեսցի : Ա ասն այսորիկ արժան է այժմէն դնել հիմն այնպիսի 'ի կրթութիւն ազգին , զի թէ ոչ մեք , գէթ որդիք մեր և կամ որդիք որդւոց մերոց վայելեսցեն յաւուրս բարեկենդանութեան , և զյիշատակ ազգասիրաց օրհնեսցեն :

Ի՞րդ անմարթ է մեծամեծ փոփոխութիւնս գործել յազգին և լուսաւորել 'ի գիտութե և յարուեստս և 'ի քաղաքականութեան , և առաւել արգոյ ցուցանել զնա յաշս տէրութեանցն՝ ընդ որոց հովանաւորութք կեանս վարէ խաղաղութեան , չե յորդորեալ զնա և վառեալ 'ի փոյթ ազգասիրութեան . քանզի ոչ կարէ ազգ մեր զարգանալ յուսմունս և յարուեստս՝ մինչ չե բազմացեալ իցեն արք ազգասէրք , որք միաբան հոգւով արութեան տայցեն զանձինս 'ի գործ առ 'ի պայծառութիւն ազգին : Ի՞պա 'ի գլուխս գլուխս հատանեմք զառածիկայս ճառ . յառաջնումն խօսեսցուք սակաւուք թէ որով օրինակամարթ իցէ յորդորել զմերսն յազգասիրուի . յերկրորդումն , եթէ որք իցեն պատճառքն որ խափան արկին ցարդ գեղեցիկ յառաջադիմութեան ազգին . և յերրորդումն թէ զիարդ մարթ իցէ զգէմունել ամենայն խափանարար չարեաց , և թէ հնար դարմանոցն զինչ :

Ո՞ւսն Ա. Հ աղաքու աղքասիրութեան :

Օ ԱՐՍ ՀԱՍԵԱԼՍ 'ի չափ հասակի, և որք սկսեալ իցեն զանձանց և զաշխարհին խորհել զօգուտ, վառել յագդասիրութիւն դիւրին է, և ես հաւանեալ եմ. այլ նոցայն հուր բոց է դիւրածախ, որ դոյզն փշմամբ արծարծանի, սաւառնի և զայս տեսողացն պատրէ. այլ 'ի յաճախել անդ անյաջող հողմոց շիջանի նորին փայլ և դարձեալ 'ի խաւարի զանձն գտանէ. նա որ յառաջն հրովազգասիրութե համարէր զանձն ջեռեալ, յետ շիջմանն և 'ի դոյզն ջերմութէ անգամ թափուր գտանի: Իւ խիթալի այն է, զի այնպիսիք 'ի բորբոքել ազգասիրութեն՝ և 'ի դժուարինս անգամ մի ջամուխ լինին. չերեկ ինչ յայս նոցա դժուարին, ամենայնի յաղթական զանձինս համարին. զլերինս հարթել և զբանութիւն ալեաց ցածուցանել ծաղու իրք են առ նոսա. վասն որոյ 'ի բորբոքել կրիցն յեռանդն հարեալ որոտան փորոտան, յաջ և յահեակ արշաւեն, և բուռն հարեալ զամենայնէ 'ի մի թափ սկիզբն առնել և աւարտել փութան: Աակայն եթէ ընդհարցին մի անգամ ընդ խութ անվանելի, և ան յաջող ելից պատահեսցեն, ձեռնթափ լինին յամենայնէ և յուսակտուր, և յահէ դժուարութեցն պակուցեալ, վատ քան զմանուկ մի ապիկար յետս կասին 'ի գեղեցիկ առաջադրութենէ մտացն. և բազում այն է զի վնաս շատ անձանց և ընկերին գործեն, և 'ի մի խորխորատ զամենեսին առ հասարակ գահավէժ հոսեն: Աքդ նախքան զամենայն արժան է հնարս հընարել զի եռանդն ազգասիրութեն անշեջ պահեսցի 'ի սիրտս մերազնեայց, որպէս զի և որ անտի յառաջդայցեն բարութիւնը՝ մնացեն յերկար: Ամին իրի անհրաժեշտ հարկ համարիմ

‘ Աախ, զի ազգասիրութեանն աւաքինութիւն տնկեսցի 'ի սիրտս մերոցն

'ի մանկութենէ, որպէս զի ընդ աճել հասակին արմատասցի և յաղթական մրցեսցի ընդդէմ հողմոց սաստկութեան, և մի հողմակոծ տապաւեսցի: Առ այս 'ի դէպ պատահէ թուղթ բագարատայ ուրումն հայց որ գրէ յի թենայ առ բարեկամ իւր Աուրէն 'ի ժամանակի մարզպանացն Պարսից, յորդորելով զնա զի բարիոք դաստիարակութեամբ վարժեսցէ զորդիս իւր յազգգասիրուհ անդըստին 'ի մանկութենէ, զի մի թուլացին յարութենէ և 'ի կորովոյ բազկի, որ այնը ժամու մարդկանն զարդքէին. և է օրինակ թղթոյն այսպիսի: ‘ Ար բնակեալգ ես յերկրի հարց մերոց, Աուրէն բարեկամ, որ շրջիս ընդ բնակութիւնս նախնեաց մերոց վեհազանց, կալ զձեռանէ որ դւոց քոց, և ցոյց նոցա զգեղեցիկ գեղեցիկ յիշատակս հարց մերոց. ցոյց զաւերակս մեծամեծ քաղաքացն որ շէնք էին երբեմն և մարդաշատք, իսկ այժմ և անուն անգամ նոցա թաղեալ ընդ ծանր մոռացութեամբ. ցոյց նոցա զգերբ բուկս հոյակապ դաստակերտացն և զիլատակս չքնաղ տաճարաց և պարանից, որոց տխուր ստուերք արկանեն 'ի մարդ զդողումն և տագնապ և սարսուռ. ցոյց զլերինս և զմլուրս, զդաշտս և զամուրս, յորոց վերայ անկան բազում քաջամարտիկը վասն մախանաց, նախանձը ընդդէմ գրգութեան, և վասն անմիտ շահախնդրութեան իշխանաց ոմանց. արտասուախառն հեծեծանօք պատմեա յունկն որդւոցդ զվրիպանսն, որոց վասն անկաւ երեմն ազգ մեր 'ի դառն ծառայութիւն. և ողորմ հայեցիւք և ջերմ հառաջանօք քովք զդիւրաթեք սիրտ նոցա միաւորեալ ընդ ազգին զօդիւ սիրոյ: Ա բարեկամ, հասեալ 'ի Վահեզմանսն 'ի բլուրն անբարտաւան, պատմեա որդւոցդ քոց՝ որպէս միաբանութեամբ և արութեամբ սակաւածեռն գնդին

„ անկաւ կործանեցաւ Շել վիրագ ,
 „ և անկարգ հրոսակն ՚ի սրտմնու-
 „ թենէ քաջացն Հայոց իթրեւ զիոշի
 „ անհետ եղեւ ընդ երեսս դաշտին մե-
 „ ծի : Հասեալ յամուրն ՚Նի ՚ի շի-
 „ րիմս արշակունի թագաւորացն ,
 „ ուսո՞նոցա մի կարծել թէ բաղդ և
 „ յաջողութի ազգին տեղի տուեալ
 „ իցեն ընդ ոսկերս նոցա : Ծես զաշ-
 „ տարակն բարձրաբերձ , և զմուաւ
 „ ած զնախնին մեր զլ' քամ , զարին ,
 „ զհայրենասէր և զանխոնջ նախա-
 „ բարն , որ զբուամք ածեալ զոխե-
 „ րիմն ՚ի իւքար , և ՚ի ծայր ամբար-
 „ տակացդ հանեալ՝ յայպն և ՚ի տե-
 „ սիլ աշխարհի և երկնային զօրու-
 „ թեանցն նշաւակէր . տես և զլերինս
 „ Արաց և զլովկասուն , և զեզերս
 „ Պոնդու և Արկրկրայ ծովուց զորս
 „ իւր սահման գծէր քաջն : Աակայն
 „ յետ այսր ամենայնի իթրեւ շուրջ
 „ հայեցեալ տեսանիցես զազդ քո
 „ վատնեալ և տարաբնակ , և զհայ-
 „ բենիս անկերպարան , որոյ և ոչ
 „ գեղ վայելութեանն երեխիցի , ար-
 „ տասուեալ ընդ նոսա , և ասա թէ
 „ ազգն ինքնին եղեւ պատճառ ան-
 „ ձին թշուառութեան , զի ոչ եկաց
 „ ՚ի հնազանդութեան հպատակեալ
 „ օրինաց թագաւորացն զորս կացոյց
 „ Աստուած ՚ի վը մեր տեարս : Վեզ
 „ ասեմ , իմս Աուրէն , վառեա զմի-
 „ տըս որդւոցդ ՚ի մանկութենէ յազ-
 „ գասիրութիւն , զի մի զօրէն ան-
 „ բանից վայրենեաց ընդ ակամք հայ-
 „ եսցին յազգակից եղարս , և մի յան
 „ միտխորհուրդս մտաբերեսցեն . . . ,
 „ Այս է պատճէն թղթոյ քաջին Շա-
 „ գարատայ որ տպաւորագոյնս ազգէ
 „ ՚ի սիրտ ծնողաց առ ՚ի կրթել զոր-
 „ դիսն ՚ի հայրենասիրութիւն : Այլ
 „ ես զձեզ աղաչեմ , ով դաստիարակք և
 „ ուսուցիչք մանկանց ազգիս . ՚ի ձեր
 „ ինսամք աւանդեցան ՚ի ծնողաց մա-
 „ տաղ մանկանցն երամք . բազմորդիս և
 „ բազմածնունդս արար զձեզ տէր Աս-
 „ տուած . և էր վասն . . . զի զեկավարք
 „ լինիցիք մտացն խզձի , զի գրեսջիք ՚ի

սիրտս նոցա զանյեղի ծշմարտու-
 „ թիւնս և զօրէնս ազգասիրութեան՝
 „ մինչդեռ զերծք իցեն նոքա յամ-
 „ նայն կանխակալու ատելութենէ և
 „ ՚ի թիւր սկզբանց : Ուսուցէք նոցա
 „ զվարս առաքինեաց մերոց նախնեաց
 „ և զցաւալի անցս , զի խորշեսցին ՚ի
 „ թերութեանցն , և նմանողս առաքի-
 „ նութեանցն եղիցին : Ասացէք նոցա ,
 „ զի յաշաղկոտութիւն և ապերախ-
 „ տութիւն առաւել գործեցին ՚ի մե-
 „ րում աշխարհի քան արութիւն բազ-
 „ կի և կորովութիւն մտաց : Ասա-
 „ ցէք նոցա , զի մինչ դեռ տիրապետէր
 „ ՚ի մերում աշխարհի անսանձ յօժա-
 „ րութիւն կամաց , աւերիչն աշխար-
 „ հաց , չկարացին զգէմ ունել բռնա-
 „ կալութեան նորա արք մեծախոր-
 „ հուրդք և քաջագործք . վասն որոյ ան-
 „ ցելովքն յուղղութիւն կրթեցէք զնո-
 „ սա , զի հայրենասկանաւ առաքինու-
 „ թեամք՝ անձանց և աշխարհին լինի-
 „ ցին երջանկութեան պատճառք : Արդ
 „ ՚ի ձեզ կայ ապաստան բաղդ ազգիս ,
 „ ո ծնողք և վարդապետք ուսմանց ,
 „ դուք էք ակնկալութիւն ազգասի-
 „ րաց . առաջնորդեցէք նոցա յուսումն
 „ ազգասիրութեան . քաջիկ տպաւորե-
 „ ցէք զայն ՚ի սիրտս նոցա , և զվարձս
 „ գովութեան արժանապէս ընդունի-
 „ ցիք ՚ի բարերարեալ ազգէս :

Արկրորդ , Հայք ՚ի հնումն առ ՚ի
 „ յորդորել զհամազգիս իւրեանց ՚ի
 „ սէր ազգին , զարութեան գործս ա-
 „ ռաքինեացն և զբարերարաց ՚ի գովել
 „ առնուին՝ յօրինելով տաղս և վիպա-
 „ սանութիւնս , և յիշատակօք նոցա
 „ բերկրէին : Խսկ ՚ի յետին ժամա-
 „ նակս վատութի մեր խափան արկ գե-
 „ ղեցիկ սովորուեն . ոյր վասն և ցրտա-
 „ ցեալ իսկ են բազումք ՚ի սիրոյ նախ-
 „ նեաց մերոց և ազգին : Վանզի գի-
 „ տեմք հաւաստեաւ , զի երգք և քեր-
 „ թողական վէպք առաւել յորդորեն
 „ զիրտ ժողովրդեան քան զայլ ամե-
 „ նայն գրուածս . և բազում այն է զի
 „ առաւել գործեցին քերթողք քնա-
 „ րաւ՝ քան աշխարհակալք զինու և ա-

զեղամբ : || ասն որոյ և յայժմուս առ
'ի յորդորել զմերսն յազգասիրու-
թիւն պարտ է և այսու հնարիւք վա-
րել լուսաքէն յաջողեսցի քերթողն ազ-
դողագոյնս առնել զքերթուած իւր
'ի սիրտ ժողովրդեան , եթէ զարարս
քաջացն երգեսցէ 'ի թատեր , քաջիկ
նկարագրեալ զկիրս նախնոյ ուրուք
և զարարուածս առաջի հանդիսա-
կանացն :

Եշրորդ , ընթեւնումք 'ի յիշա-
տակս նախնեաց մերոց , զի լրամ
նախատիպն ազգասիրութեան առ 'ի
քակել զմիաբանութի չունաց բնա-
կելոց 'ի միջերկրեայս , պատուէր 'ի
վերայ եղ , զի թողեն զբնիկ բար-
բառ իւրեանց և հայերենախօս լինի-
ցին : Խորհուրդ քաջի , իմաստնոյ և
քաղաքագիտի . հնարք չարանիւթ :
Վանզի գիտէր այրն կորովամիտ , թէ
այսու հնարիւք կարող է ցրուել և
բաժանել զնոսա 'ի միմեանց : Եւ
կարի յիրաւունս . քանզի լեզուն է
որով միայն անխախտ պահին օրէնք
ազգային քաղաքական և եկեղեցա-
կան . ազգային բարբառն միայն է
որ արծարծանէ զսէր առ համազ-
գիս : Որպէս եթէ ազգակից եղ-
բարք տարադէմ ելեալ 'ի հայրենի
երկրէն յածեսցին ընդ ծով և ընդ
ցամաք , և յետ սահելոյ անցանելոյ
ընդ սփիւռս ազգաց՝ եկեալ պատա-
հեսցեն իրերաց , տես զինդութեան
նոցա կերպարան : Այնչափ բերկրի
յանձն այր արաբացի մոլորեալ յան-
ջրդի անապատի 'ի գտանելն զաղ-
րիւր բարեհամ , որչափ սոքա 'ի տե-
սանելն զմիմեանս . ոչ այնչափ զուար-
թամտի նաւազար 'ի տեսանել զաշ-
տարակս հայրենեաց իւրոց՝ յետ հա-
տանելոյ զանեզն ովկիան , որչափ սո-
քա 'ի գտանելն զմիմեանս : Փարին
զարանոցաւ այր եղքօր , խօսին ան-
յագ հայրենի բարբառով . յայնժամ
ոչ ես զմտաւ ածեն զտառապանս ո-
րում տարան յօտարութեան անդ .
քաղցր հայեցիւք նային 'ի դէմս մի-
մեանց , եղբայրացեալք և ոչ կարեն

անջատիլ . և 'ի յետին պահու յո-
րում հարկին մեկնել առեալ զձեռա-
նէ արտասուեն ջերմաջերմ , և քա-
ջալերեալ զմիմեանս ասեն . “Հապա
եղբայր , 'ի հայրենիս մեր տեսցուք
զմիմեանս , : լրդ 'ի միտ առ զգօրու-
թիւն աստուածատուր պարգեին , ո-
րով սերտ միաւորին եղբարք ազգա-
կիցք :

|| ախճան բանիս այս է , զի մեք 'ի
հնումն առ 'ի քակել զհիմունս ազ-
գութե օտարաց հարկ առնէաք նոցա
մուանալ զմնիկ բարբառ իւրեանց .
և ընդ հակառակն , արդ , եթէ չհա-
մարեսցի յանդգնութի բանս , ազգն
մեր ինքնին քակէ զհիմն ազգութեան
իւրոյ , յանձն իւր առեալ զնոյն հը-
նարս : Վանզի ցրուեալ ազգ մեր ընդ
բազումպետութիւնս՝ տակաւ մոռա-
նայ զհայրենի բարբառ իւր , ածեալ
ձգեալ անխտիր զբարբարոս բանս 'ի
հայրենին խօսմն , և ուրեք ևս ամենեկին
'ի բաց վտարեալ զգեղեցիկն , զհա-
րուստն և զվսեմականն զայն բարբառ ,
փառս համարելով հելենախօս լինել .
գաղղիաբանել , իտալաբանել և կամ
տաճկականաւն վարել : Եթէ այդ-
պէս իցէ , ապա միլայք , ազգասէլքդ ,
ընդ դառն արհամարհանս զոր կրէք
յազգատեաց եղբարց , և մի ողբայք
'ի զուր ընդ վարատումն մերոյ ազ-
գիս :

Յայժմուս ազգութե մերոյ ցոյցք՝
լեզուն միայն է . եթէ բարձուք և
զայն 'ի միջոյ , ապա չեմք հայք , չեմք
ծնունդք սերեալք 'ի նախնի վեհա-
զանց . այլ ապաժաման խուժ դուժ
անազգիք . աստանդականք ցրուեալք
աստ և անդ իրեւ զտերեւս հողմա-
վարս , որոց անյայտ են և հայրենիք
և նախամայրն ծառ . եթէ բարձ-
ուք 'ի միջոյ զհայկականս բարբառ ,
ամենայն սովորութիւնք ազգայինք
արհամարհ թուեսցին այնու հետե .
քակտեսցին համազգի եղբարք 'ի մի-
մեանց որպէս երբեմն 'ի բարիլոն .
զեարեսցին ընդ համասնունդ հար-
զատս , և թաքթաքուր ընդ անախար-

Հիկս գրեսցին իբրև զայժմու գըն-
չուտ գաբաւնացիս : Այդ առ ՚ի
պինդ ունել զազգութիւն, և յազ-
գասիրութիւն զմերսն յօրդորել, կա-
րեոր հարկ համարիմ, զի ջան ՚ի
դործ արկցեն ազգայինք վարժել՝ ՚ի
հայկականս բարբառ, և անձնապահ
լիցին, և մի զօտարոտի զրոյցս խառ-
նեսցեն ՚ի հարազատն մեր բարբառ :

Որրորդ, որպէս Եթէ ոք զակն
կառուցեալ ընդ երկար հայեսցի ՚ի
մարմին լուսաւոր, և դարձուցեալ ան-
տի զաշս իւր՝ ընդ աղօտ տեսանէ
զամենայն արարածս և զգեղոյնոցա
չկարէ առնուլ զքափ, այսպէս և մեք
իբրև հայեցեալ ընդ բնաւ ազինս
Խւրոպայ և տեսանիցեմք զոմանս ՚ի
նոցանէ զարգացեալս ՚ի գիտութեան,
յարուեստս և ՚ի քաղաքականութեն,
և ամենայն բարեմասնութքք բար-
գաւաճեալս, խտորին աչք մեր ՚ի լու-
սաւորութենէ փառաց նոցա . և ՚ի
վեր առեալ անտի զաշս մտաց և ակն-
արկեալ յազգ մեր, համարիմք զնա
մերկ ՚ի փառաց, և խաւարային բաղ-
դի վիշակեալ . վասն որոյ խորժմք
մերժիմք ՚ի նմանէ, և ամաչեմք ևս
՚ի հայութեանն անուանէ . գուցէ և
՚ի պահանջել հարկի մտաթերիցեմք
ևս քերել սրբել յանձանց զվատ
անուն հայութեան . որպէս Եթէ յա-
նուանել զանձինս մեր յոյնս, գաղ-
ղիացիս, կամ իտալացիս, փոխեսցի և
բոյս բարուց մերոց, և միտք մեր
լուսաւորեսցին անդէն ՚ի գիտու-
թեան և յիմաստութեան : Ա՛յ, մի
կարծիցես առիւծենեաւ պատրուա-
կել զանձինդ թերութիւն : Աւաղ ծան-
ծազմտութեանն, յոր բնաւորեալ
թուի ազգ մեր . քանզի ոչ ամաչէ
հրեայն ՚ի հրէութենէ, ասորին յա-
սորութենէ, և այլ խուժագումն ՚ի
խժական անուանէ . հայն է միայն որ
ախտանայ զայս ախտ թեթեամտու-
թեան : (տարախորթաց միայն է ա-
մաչել ընդ տգեղութիւն ծնողաց իւ-
րեանց . անհարազատ և անիմաստ
մանկանց է անարգու ծնողաց լինել

վասն տգիտութեն նոցա և աղքատու-
թեան : Կարեսնիր Եթէ թանձունք ի-
ցեն և տիմարք . այլ գու ուստի՞ ու-
սար անգոսնել և եպերել զեղքարս քո
զազգայինս . Եթէ վասն այսորիկ զի
տիմարք են և անփառունակք, այլ գի-
տասնիր, զի ոսկւոյ և արծաթոյ ան-
գամ հասանէ ժանգահարիլ և կորու-
սանել զգեղն նախկին . սրբեալ զաղտն
և առ զժանգն, տես զի ահա ոսկին
ոչնուազեցաւ ՚ի պատուականութէն,
և արծաթն սուրբ և պիտանի . այսպէս
իմա և զազգ մեր : Ծառզ զի Եթէ կա-
միցիս և գու ինքնին անակնառու և
քաջատես մտզք խնդրել և ՚ի քնին
առնուլ զբարի բարի հանգամանս ազ-
գիդ, դիւրաւ երեխն քեզ . համեմա-
տեա ընդ այլ ազինս արեելեայց ,
յայնժամ ՚ի միտ առցես զպատուա-
կանութիւն ազգիդ . անց մի անգամ
ընդ գիրս արդի աշխարհագէտ Ճա-
նապարհորդաց, և խելամուտ լեր ա-
սացուածոց նոցա . լուր աղէ զինչ ա-
սէ | որտ Պայրն անգղիացի աշխար-
հաքարոզն քերթող . “ Այս ազգ (հայ-
ոց) ազնուական՝ կցորդ եղեւ տա-
,, ռապանաց և գերութեան Ճրէից
,, և Ճելլենացւոց, այլ զերծ մնաց
,, յառաջնոցն խստարտութենէ, և
,, ՚ի վերջնոցս վատութենէ : Այս ժո-
,, զովուրդ լցաւ Ճոխութք՝ առանց
,, վաշխից և տոկոսեաց, և լիացաւ
,, փառօք՝ զորս ՚ի ստրկութեան պայ-
,, մանի մարթ իցէ ունել՝ առանց
,, խարկանաց . . . Պատուարին իմն
,, թուի ինձ գտանել յիշատակարանս
,, ազգաց այնչափ ազատս ՚ի մեծամեծ
,, եղեռանց իբրև զՃայոցն . քանզի
,, առաքինութիւնք նոցա՝ խաղաղու-
,, թեան են արգասիք, և թերու-
,, թիւնքն՝ բռնակալուե ազդմունք :
,, Աակայն իցէ բազդ նոցա (արդարե-
,, բազդ դառն) որպիսի և իցէ այժմ
,, և յապագայս . այլ աշխարհ նոցին
,, յամ ժամանակս կացցէ մնացէ
,, իբրև զմի ՚ի չքնաղագունիցն ՚ի տիե-
,, զերս . և բարբառ նոցա առ հա-
,, Ճոյագոյն ևս լինելոյ՝ ոչ իմիք ար-

„ գեօք կարօտանայ , բայց մտադիւ-
„ բագոյն ևս 'ի նոյն պարապելոյ „ :
| հւր և զբանս Պարաթթայի ի-
տալացւոյ .

“ Կրբամիտք են Հայք և զուար-
„ թունք յոյժ , և զօրութիւն մեծ է
„ հանձարոյնոցին անյողդողդն հաս-
„ տատութիւն յամենայնի , որով յաղ-
„ թական գտանին և ամենայն մտա-
„ ւորական հանդիսից : | յւ գեղեցիկ
„ վկայ այսմ ամենայնի երաշխաւո-
„ րեսցէ ոչ միայն տուրեառիկ փո-
„ փոխմանցն ճշգրտութիւն՝ յորում
„ քաջահմուտք են և ծայրացեալք
„ իսկ , այլ և ձեռնարուեստ Ճարտա-
„ րութիւնք , յորս այնպիսի իմն ցու-
„ ցանեն յաջողակութիւն՝ մինչև հիա-
„ ցուցանել բազումանգամզմերազ-
„ նեայ Ճարտարա . թէպէտ և սոքա
„ անհամեմատ շահու գեղեցիկ հրա-
„ հանգաց գլեն զՀայովք՝ որ թերա-
„ ցեալք են յայնպիսի վարժոցաց , և
„ անձամբ զանձինս վարեն յառաջ
„ հրաշալի իմն զուարթութեամբ և
„ երկայնմուութեամբ . . . | Ա ինչընդ-
„ հատ 'ի դիւրայարմարն լինելոյ յու-
„ սումն գիտութեանց , մեծապէս ա-
„ չալուրջք են Հայք և 'ի բնէ հմուտք
„ քաղաքականութեան . և զայս հըմ-
„ տութիւն անդստին 'ի ծննդենէ
„ բարձեալ բերեն յանձինս . և ոչ
„ վրիպիցէ ոք 'ի Ճշմարտութենէ՝ ե-
„ թէ ասիցէ , զի չիք խորագիտութիւն
„ մարդկային այնչափ նրեին և ան-
„ հակառակելի իբրև զՀայոցն . ժո-
„ ղովուրդ որ չունի պէտս Ա աքիա-
„ ւելեայ առ ուսանելոյ զիսորազնին
„ գաղտնիս քաղաքականութիւն : | Ա յլ
„ ըստ բախտի իմն է , զի զայս սքան-
„ չելի և բազմավտանգ խորագիտու-
„ թիւն յուղիզն վարեն , կամ թէ
„ մեծաւ առաքինութեամբ և զգաս-
„ տասէր մոտօք սանձահարեն . որ և
„ այս մի է յառանձին բնատուր պար-
„ գեաց Հայաստան մարդկան . սմին
„ իրի իսկ այս խտիր է ընդ Հոյնս
„ և ընդ սոսա , զի քաղաքականութիւն
„ սոցին պաշտպանողական է մանա-

„ ւանդ քան արշաւական . և հայ ոք
„ մարդ շատ գրեալ չպատրել յումմէ
„ և իցէ , և զիարդ և իցէ , դուն ու-
„ րեք և կամ ոչ երբէք որոգայթա-
„ դիր լինի այլոց „ :
| յւ գաղղիացին | յրիէս . “ Արա-
„ միտ է Հայն և խոհական , չա-
„ փաւոր յոյժ յոյժ , և գործունեայ
„ անչափ , և առ ինչս մթերելոյ չիր-
„ նայէ յաշխատութիւն և 'ի հօգու-
„ և 'ի տառապանս , և գիտէ պահ-
„ պանել զստացուածնն : | Քան յա-
„ մենայն ինչ՝ 'ի վաճառականութիւն
„ պարապէ , որում և քաջահմուտ է
„ ամենեկին „ :

Բ ստ այսմ օրինակի խօսի և | ամար-
թին 'ի Ճանապարհորդութեան իւ-
րում յարեելու :

| յւ ապա 'ի միտ առ զպատուակա-
նութիւն ազգիդ , և փառս տուր այնմ
որ հաղորդս արար զքեզեղբայրութե-
ազգի այնպիսւոյ : | յսկ եթէ դար-
ձեալ անգունեցես զնա վասն թշուա-
ռութեանց և տգիտութիւն նորին , և
յամառեցես 'ի նոյն միտս , եթէ դար-
ձեալ ամաչես 'ի հայութեանդ անուա-
նէ և 'ի տգեղութենէ ազգիդ , ել 'ի
բաց 'ի նուիրական հարազատութիւն
նորա , և երթ ժառանգեալ զվատ ա-
նուն ազգատեցութեան , և յանազ-
գիս և յանաշխարհիկս գրեսջիր :
Տար ընդ քեզ և զանիմաստ գումար-
տակս ազգատեցացն , զի մի խոչընդուն
լինիցիք յաջողակ ընթացից ազգա-
սիրացն :

| յսկ դու ազգասէրդ , իբրև հայես-
ցիս յայլ ամ աղինս և տեսանիցես
զփառաւորն և զանարդ , զիմաստունն
և զտգէտ , զծոխն և զաղքատ , զմտաւ
ած զի ամենայն ազգի և թագաւո-
րութեան են փոփոխութիւնք ան-
հրաժեշտք սահմանեալք յամենա-
տեառնէն . ժողովուրդ որ համարիցի
զանձն 'ի գեղեցիկ գարնան իմաս-
տութեան , և ամենայն Ճարտարու-
թեամբ ակաղձուն և պտղաւէտ , մի
շատ բերկրեսցի . գուցէ ձմեռն վերա-
հաս մերձեալ իցէ . իսկ դու զի հա-

մարիս զազգ քո 'ի ձմերան տղիտութեան և 'ի սառնամանիս տառապանաց , գիտասջիր զի դրունք դարնան իմաստութեան տակաւ բանին , և հոտ գիտութեան սկսանի բուրել 'ի դրախտատիպ վայրաց հայաստան աշխարհին :

(Օձեզաղաչեմ, ով ազգասէրք , իւրել լսիցէք դառն և կսկծելի թշնամանս ընդդէմ ազգին յորդւոց ժողովրդեան ձերոյ , դարձուցէք զաշս ձեր յերկինս . յոդւոց համեալ ակն կալջիք այնմ որ կարողն է լուսաւորել զմիտսև առաջնորդել ընդշաւիլս որ տանի 'ի բլուրն երանութեան :

Երբել լսիցէք զայս բան յուսահատ , թէ " լյաւարեալ և աննշոյլ է աստղ բաղդին հայոց .. , մի երկնջիք մինչ դեռ յաճախին օր ըստ օրէ թիւք ազգասիրաց : Ի՞անզի յայնժամ տեսցեն ակներել և յամօթ լիցին՝ զի չէ խաւարեալ արեգակն փառաց մերոց , և ոչ կորուսեալ արուսեակն իմաստութէ :

Երբել լսիցէք թէ " Իզդ հայոց նըմանէ վաճառականութեամբն անխոնջ և վաստակասէր մըջեան , որ աղմկեալ 'ի վերահաս արկածից , տագնապեալ և կորուսեալ զբոյն իւր , ցորեան 'ի բերանի ' հատանէ զդաշտն հարուստ և ոչ ժամանէ 'ի բոյն իւր . ընդ բլուրն 'ի վեր ելանէ և իջանէ , ձեպի այսր և անդր յուսահատ , խընդրէ զեղբարս իւր յուսով և յանյոյսս կորնջի , և զարհուրեալ յահէ անցաւորաց ընդ վիմով դարանի , և անոք անօգնական 'ի մահ յուղարկի .. 'ի լսել քո զայս բան , դարձեալ ասեմ , մի այլ ինչ գործեր , ամբարձ զաշս քո յերկինս , հառաչեա արտասուօք , զի ամօքեսցի սիրտ ամենողորմնն , և 'ի ձեռն բարեսէր ինամոց թագաւորացն՝ ընդ որոց հովանաւորութեամբ վայելեմք յայս արել կենդանութեան , հովուեսցէ զքեզ ընդ հովանեաւ ձեռին իւրոյ , և առաջնորդեսցէ յիմաստութիւն և 'ի խաղաղութիւն :

ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ

Պալատի :

Ըգրածուր թէ արգեօք հին ատեն լուսիացիք գլուխնին կը գոցէին թէ չէ : Ի՞անի մը պատմութիւններէ կ'երենայ՝ թէ կանայք սովորաբար քող կը ձգէին իրենց գլուխը : Ի՞աբեւացիք գլխարկի տեղ արտախուրակ ' կը դնէին . Ա'արք խոյր կամ զարդարուն գլխարկ կը գործածէին . շատ հաւանական է թէ հայերն ու Պարսիկներն ալ նոյնպէս կ'ընէին :

Ա'եր լեզուին մէջ իոյր կ'ըսուի սովորաբար որ և իցէ պատուաւոր գլխարկը . զոր օրինակ թագաւորականը , ինչպէս էր լուսարութագը , որ լուսակետը կը բանէր մետաքսէ՝ մարգրտով ու գոհարներով զարդարած . կամ թէ եպիսկոպոսական թագը , քահանայական սաղաւարտը , և այլն : Այսնշանակութեամբ գործածուած ունինք նաև արտախոյր կամ արտախուրակ ' բառերը , բայց կ'երենայ թէ բուն ասիկայ զարդարուն գլխարկին՝ այսինքն խոյրին վարի կողմը կապուած բարակ ու ազնիւ լաթն էր , որ ծայրերը դէպ 'ի էտին կախուած կ'ըլլային : Փաէէն բառը յունարէն է , ու Ա'ագիստրոսին և Աշրջնկացւոյն խօսքերուն նայելով՝ փակեղ գործածելու սովորութիւնն ալ 'ի ըսունաց առնուած է , և կը նշանակէ ուրաք ' որ քահանայք և սարկաւագունք կը գործածեն . բայց կ'երենայ թէ նաև իբրեւ գլխու ծածկոյթ գործածուած կայ : Լսկ ժակել բառը իբրեւ փաթթոց կամ արտախուրակ գործածելը ետքի ատենները մտած է , և ռամկօրէն է : Օ ինուորական է սաղաւարտը , և երկըթէ կամ պղնձէ կ'ըլլայ . բայց մեր արարողութեան մէջ քահանայից բանեցուցած խոյրն ալ սաղաւարտ կ'ըսուի ' ձեին նմանութեանը պատճա-